# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 5)**

21 ապրիլի 2017թ. ժամը՝ 15$^{00}$

1. «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի ջերմոցի կառուցում» ծրագրի մասին:
(Ռիփսիմե Մուրադյան)

2. «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանում ճապոնագիտության կրթական ծրագրի միջավայրի կատարելագործման» ծրագրի մասին:
(Միքայել Մակարյան)

### 3. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

3.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

3.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին:

3.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին **N1**:

3.4 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին:

3.5 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **N 2**:

3.6 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

3.7 «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին»:

3.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):



հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ):

4.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):

4.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):

4.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ):

4.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1339-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

4.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1354-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

4.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-241-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն):

4.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի N Մ-739-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ):

4.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-114-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության հայաստանյան մասնաճյուղ):

### 5. Այլ հարցեր

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-884-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրի շրջանակներում ավտոմեքենաների ներմուծման մասին («Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամ):

3.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

3.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

3.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

3.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

3.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

3.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):

## 4. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Արման Բարխուդարյան)

4.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին **N 1** («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

4.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-026-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

4.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

4.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2017 թվականի N Մ- - Ա**

**քաղ. Երևան**

N 5/2

## «ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՍՈԱՐ) - ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՋԵՐՄՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 02/14/ -17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի ապրիլի -ի ԱԱՄ/ԱնՄ-2-1/ -17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/ -17 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2017 թվականի ապրիլի -ի N 01/ -17 եզրակացություն-ները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան, շենք 58, բն. 1, ՀՎՀՀ՝ 00148272) իրականացվող՝ 5,407,584 դրամ արժողությամբ «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի ջերմոցի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00148272) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլիտ Արմանշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05537917) 2017 թվականի ապրիլի 18-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի համար ջերմոցի կառուցում՝ 5,407,584 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստանե

բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն

...ՐԱԴՅԱՆԻ կողմից

18 ապրիլ 2017

## ԾՐԱԳԻՐ

Գյումրու «Երեխաների Տուն» ՊՈԱԿ-ի ջերմոցի կառուցում

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ջերմոցի կառուցում Գյումրու «Երեխաների Տուն» ՊՈԱԿ հաստատությունում (հասցե՝ ք. Գյումրի Թամանյան փողոց 17 շենք) |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (ՍՕԱՐ) հիմնադրամ՝ 150 Ն. Ռադնոր Չեսթեր Ֆ.200, Ռադնոր 19087 Փենսիլվանիա, ԱՄՆ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ (ք. Երևան, Քանաքեռ Զեյթուն Թբիլիսյան խճղ 19) ՀՎՀՀ 00148272 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Թամանյան փողոց 17 շենք Բնագավառ- սոցիալական |
| [illegible] | [illegible] | 5407584 ՀՀ դրամ [illegible] |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի ապրիլի 25-ից մինչև 2017 թվականի հունիսի 20-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գյումրու «Երեխաների Տուն» ՊՈԱԿ հաստատությունում ջերմոցի կառուցում (հասցե՝ ք. Գյումրի Թամանյան փողոց 17 շենք)<br>5407584 ՀՀ դրամ առանց ԱԱՀ<br>2017 թվականի ապրիլի 25-ից մինչև 2017 թվականի հունիսի 20-ը |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը եվ նախատեսվող գինը | Գյումրու «Երեխաների Տուն» ՊՈԱԿ հաստատությունում ջերմոցի կառուցում (հասցե՝ ք. Գյումրի Թամանյան փողոց 17 շենք)<br>5407584 ՀՀ դրամ առանց ԱԱՀ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է բարեգործի կողմից, ինչպես նաև սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6891-17
20.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
18.04.2017թ. N 15/15.1/9410-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի ջերմոցի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

034/15772-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

20.04.17 N 02/14/6372-13

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 18-ի 15/15.1/9410-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն /ՍՕԱՐ/-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի ջերմոցի կառուցում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/15840-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«20» 04 2017թ.
No 01/3-8/13283-17

Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 18.04.2017թ.
թիվ 15/15.1/9410-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի ջերմոցի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

0114/15775-17

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

«20» 04 2017թ. գ.Գյումրի, Գ.Նժդեհի 16
N: 01/2885-17
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

*Ձեր՝ 18.04.2017թ.*
*թիվ՝ 15/15.1/9410-17*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու «երեխաների տուն» ՊՈԱԿ-ի ջերմոցի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի նշանակությունը և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝ Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

կատ Հ.Արշակյան
/0312 3-16-26/

116/15848-17

**ՆԱԽԱԳԻԾ**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2017 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

### «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՃԱՊՈՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N /-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 02/17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017՝թվականի ապրիլի –ի N -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474) կողմից իրականացվող՝ 31,194 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Հայ-Ռուսական համալսարանում ճապոնագիտության կրթական ծրագրի միջավայրի կատարելագործման» ծրագիրը (կցվում է):

2. «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ-Ռուսական համալսարանի
Ռեկտոր Ա.Ռ. Դարբինյանի կողմից
«20» ապրիլի 2017թ.

# Հայ-Ռուսական համալսարանում Ճապոնագիտության կրթական ծրագրի միջավայրի կատարելագործման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝<br>• Հայաստանում Ճապոներեն լեզվի տարածումը;<br>• Հայ երիտասարդների շրջանում ճապոնական մշակույթի նկատմամբ իրազեկվածության և հետաքրքրության մակարդակի բարձրացումը;<br>• Հայաստանում Ճապոնագիտության ոլորտի մասնագետների պատրաստումը համապատասխան կրթական ծրագրի իրականացման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայաստանում Ճապոնիայի դեսպանություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարան<br>ՀՀ, քաղ. Երևան, 0051, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարան, ՀՀ, քաղ. Երևան 0051, Հովսեփ Էմինի 123:<br>Բնագավառը՝ բարձրագույն կրթություն և գիտություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 31 194 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարանի ուսանողները, կրթական ծրագրի մասնակիցները և պրոֆեսորադասախոսական կազմը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի տևողությունը՝ 14 մարտի 2017թ. - 31 մայիսի 2018թ. |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ.-ի մարտի 14-ից մինչև 2018թ. մայիսի 31 ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br><br>1. Համակարգչային տեխնիկայի, համալրող և այլ սարքերի ձեռքբերում:<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է համակարգչային տեխնիկայի և համալրող սարքերի ձեռքբերում:<br>Ապրանքների նախահաշվային արժեքը կազմում 21 419 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>2. Վիդեոկոնֆերանսների համար նախատեսված սարքավորումների ձեռքբերում (ներմուծում):<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է վիդեոկոնֆերանսների համար նախատեսված սարքավորումների ձեռքբերում (ներմուծում), տեղադրում և կարգաբերում:<br>Ապրանքների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 806 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>3. Կահույքի ձեռքբերում:<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է իրականացնել կահույքի ձեռքբերում:<br>Ապրանքների նախահաշվային արժեքը կազմում է 2 616 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>4. Հեռահար ուսուցման և Ճապոներեն լեզվի ուսուցման համար նախատեղված ծրագրային ապահովման ձեռքբերում (ներմուծում):<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է իրականացնել հեռահար ուսուցման և Ճապոներեն լեզվի ուսուցման համար նախատեսված ծրագրային ապահովման ձեռքբերում (ներմուծում):<br>Ապրանքների նախահաշվային արժեքը կազմում է 4 565 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>5. Տեսահսկման համակարգ: |

| | | |
|---|---|---|
| | | Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է տեսահսկման համակարգի ձեռքբերում և տեղադրում:<br>Ապրանքների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 446 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>6. **Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:**<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է իրականացնել աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:<br>Ծառայության նախահաշվային արժեքը կազմում է 1 342 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. **Համակարգչային տեխնիկայի, համալրող և այլ սարքերի ձեռքբերում:**<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է համակարգչային տեխնիկայի և համալրող սարքերի ձեռքբերում:<br>Ապրանքները նախատեսված են ճապոներենի ուսումնասիրության արդի եղանակների ներդրման համար:<br>Ապրանքների նախահաշվային արժեքը կազմում 21 419 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>2. **Վիդեոկոնֆերանսների համար նախատեսված սարքավորումների ձեռքբերում (ներմուծում):**<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է վիդեոկոնֆերանսների համար նախատեսված սարքավորումների ձեռքբերում (ներմուծում), տեղադրում և կարգաբերում:<br>Ապրանքները նախատեսված են հեռահար ուսուցման և ՀՌՀ ուսանողներին ճապոնագիտության ոլորտում առաջատար մասնագետների փորձին ծանոթացնելու համար:<br>Ապրանքների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 806 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>3. **Կահույքի ձեռքբերում:**<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է իրականացնել կահույքի ձեռքբերում: |



| | | |
|---|---|---|
| | | Ապրանքները նախատեսված են ճապոնագիտության հատուկ լսարանի կահավորման համար:<br>Ապրանքների նախահաշվային արժեքը կազմում է 2 616 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>4. **Հեռահար ուսուցման և ճապոներեն լեզվի ուսուցման համար նախատեսված ծրագրային ապահովման ձեռքբերում (ներմուծում):**<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է իրականացնել հեռահար ուսուցման և ճապոներեն լեզվի ուսուցման համար նախատեսված ծրագրային ապահովման ձեռքբերում (ներմուծում):<br>Ճապոներենի ուսումնասիրության ծրագրային միջոցներն ու գործիքները թույլ կտան ունկնդիրներին առավել արագ և դյուրին կերպով յուրացնել լսարանում մատուցվող նյութերը:<br>Ապրանքների նախահաշվային արժեքը կազմում է 4 565 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>5. **Տեսահսկման համակարգ:**<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է տեսահսկման համակարգի ձեռքբերում և տեղադրում:<br>Ապրանքների ձեռքբերման նպատակն է ՀՌՀ ճապոնագիտության լսարանում անվտանգության ապահովումը:<br>Ապրանքների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 446 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>6. **Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:**<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է իրականացնել աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:<br>Ծառայությունների նպատակն է ծրագրի ավարտին գնումների գործընթացի, բյուջետավորման, ծախսերի հսկողության և ֆինանսավորող կողմի նկատմամբ հաշվետվողականության ճշգրտության ապահովումը:<br>Ծառայության նախահաշվային արժեքը կազմում է 1 342 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված վարչակազմական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված վարչակազմական ծախսերը ներառում են ծրագրի ամբողջ գծով ծախսերը, որոնք արտահայտված են առանձին 9.6 և 10.6 կետերում: Ծրագրի ամբողջ գծով ծախսերը կազմում են 1 342 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ կրթության և գիտության նախարարության և Հայաստանում Չինաստանի դեսպանության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման մեխանիզմները | Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներկայացնել ընթացիկ և վերջնական ֆինանսական հաշվետվություններ Հայաստանում Չինաստանի դեսպանություն, ինչպես նաև տարեկան հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

5

ԱՐ. 5/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐ. 5/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6746-17թ.
18.04.17թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
12.04.2017թ. N 15/15.9/9017-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանում ճապոներենի ուսուցման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/15467-17
18.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«19» 04 2017թ.
No 06/3-8/13238-17

Ձեր No ______

ar. 5/2

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 12.04.2017թ.
թիվ 15/15.9/9017-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանում ճապոներենի ուսուցման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

1. Ծրագրի 1-ին կետի համաձայն ծրագրի նպատակն է Հայաստանում ճապոներեն լեզվի տարածումը, սակայն ծրագրում բացի ձեռք բերվող համակարգչային տեխնիկայից, այլ սարքավորումներից և կահույքից նախատեսված չեն անմիջական ծրագրային միջոցառումներ (դասընթացներ) և դրանց համապատասխան արժեքներ: Ուստի ծրագրի նպատակը և անվանումը միմյանց չեն համապատասխանում:

2. Ծրագրի 9-րդ կետում որպես միջոցառումներ նշված են համակարգչային տեխնիկայի, համալրող և այլ սարքերի, վիդեոկոնֆերանսների համար նախատեսված սարքավորումների, ինչպես նաև կահույքի և հեռահար ուսուցման համար ծրագրային ապահովման ձեռքբերումներ: Սակայն ծրագրից պարզ չէ, թե վերջիններս ինչ հիմունքներով են շահագործվելու (վճարովի, անվճար) ծրագրի ընթացքում: Բացի այդ, համակարգչային տեխնիկայի մասով պարզ չէ, թե բարեգործական որակման ներկայացվող մեկ տարվա ծրագրի ավարտից հետո ինչպես է նախատեսվում տնօրինել վերջիններս:

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/15681-17

Ելնելով վերոգրյալից, ներկայացված ծրագրի բարեգործական որակումը հնարավոր ենք համարում բարձրացված հարցերի վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ ներկայացնելուց հետո:

ar. 5/2

Հարգանքով՝ Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

13.04.17 N 02/14/6046-17

Ձեր N ________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 12-ի 15/15.9/9017-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայ-Ռուսական /Սլավոնական/» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանում ճապոներենի ուսուցման» ծրագրի որոշման նախագծի 1-ին կետի և ծրագրի 6-րդ կետի դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել միմյանց՝ նկատի ունենալով ծրագրի բյուջեին վերաբերող դրույթներում առկա անհամապատասխանությունը: Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/15022-17
13.04.17

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel 54 67 16, 58 03 02, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/4945-17 «14.04.17» 2017թ

*ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի ապրիլի 12-ի №15/15.9/9017-17 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանում ճապոներենի ուսուցման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** ?????? ????????
Apr 14 2017 3:27 PM +04:00

**ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ**

*կատ. Նոննա Սահակյան*
*հեռ. 562351*

031/15265-17

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանում ճապոնագիտության կրթական ծրագրի միջավայրի կատարելագործման» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք. որ «Հայ-Ռուսական /Սլավոնական/» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանում ճապոներենի ուսուցման» ծրագրի որոշման նախագծի 1-ին կետի և ծրագրի 6-րդ կետի դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել միմյանց՝ նկատի ունենալով ծրագրի բյուջեին վերաբերող դրույթներում առկա անհամապատասխանությունը: Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները: | Խմբագրված նախագիծը կցվում է: |
| **ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.<br>1. Ծրագրի 1-ին կետի համաձայն ծրագրի նպատակն է Հայաստանում ճապոներեն լեզվի տարածումը, սակայն ծրագրում բացի ձեռք բերվող համակարգչային տեխնիկայից, այլ սարքավորումներից և կահույքից նախատեսված չեն անմիջական ծրագրային միջոցառումներ (դասընթացներ) և դրանց համապատասխան արժեքներ: Ուստի ծրագրի նպատակը և անվանումը միմյանց չեն համապատասխանում:<br>2. Ծրագրի 9-րդ կետում որպես միջոցառումներ նշված են համակարգչային տեխնիկայի, համալրող և այլ սարքերի, վիդեոկոնֆերանսների համար նախատեսված սարքավորումների, ինչպես նաև կահույքի և հեռահար ուսուցման համար ծրագրային ապահովման ձեռքբերումներ: Սակայն ծրագրից պարզ չէ, թե վերջիններս ինչ հիմունքներով են շահագործվելու (վճարովի, անվճար) ծրագրի ընթացքում: Բացի այդ, համակարգչային տեխնիկայի մասով պարզ չէ, թե բարեգործական որակման ներկայացվող մեկ տարվա ծրագրի ավարտից հետո ինչպես է նախատեսվում տնօրինել վերջիններս:<br>Ելնելով վերոգրյալից, ներկայացված ծրագրի բարեգործական որակումը հնարավոր ենք համարում բարձրացված հարցերի վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ ներկայացնելուց հետո: | Լրամշակված ծրագիրը կցվում է: |

ԱՐ 5/2


Министерство образования и науки РФ
Министерство образования и науки РА
Государственное образовательное учреждение
высшего профессионального образования
Российско-Армянский (Славянский) университет

РАУ

ՌԴ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Բարձրագույն մասնագիտական կրթության
պետական ուսումնական հաստատություն
Հայ- Ռուսական (Սլավոնական) համալսարան

Армения, 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123,
тел. (+374 10) 22-92-54, 27-70-52
факс: (+374 10) 28-97-01, 26-97-01

Հայաստան, 0051, ք. Երևան, Հ. էմին 123,
հեռ. (+374 10) 22-92-54, 27-70-52
ֆաքս: (+374 10) 28-97-01, 26-97-01


«20» 04 2017г. № 04-180

Հայաստանի Հանրապետության Կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պրն Տեր-Սիմոնյան

Կից ներկայացնում եմ Հայաստանում Ճապոնիայի դեսպանության կողմից ֆինանսավորվող՝ Հայ-Ռուսական համալսարանում Ճապոնագիտության կրթական ծրագրի միջավայրի կատարելագործման ծրագրի լրամշակված տարբերակը:

Խնդրում եմ ծրագիրը որակել որպես բարեգործական՝ դրանից բխող հարկային հետևանքներով:

Հարգանքով՝
ՀՌՀ ռեկտոր՝ Ա. Դարբինյան

096 - 15832
20 04 17

352

Министерство образования и науки РФ
Министерство образования и науки РА
Государственное образовательное учреждение
высшего профессионального образования
Российско-Армянский (Славянский) университет

РАУ

ՌԴ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Բարձրագույն մասնագիտական կրթության
պետական ուսումնական հաստատություն
Հայ- Ռուսական (Սլավոնական) համալսարան

Армения, 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123,
тел. (+374 10) 22-92-54, 27-70-52
факс: (+374 10) 28-97-01, 26-97-01

Հայաստան, 0051, ք. Երևան, Հ. էմին 123,
հեռ. (+374 10) 22-92-54, 27-70-52
ֆաքս: (+374 10) 28-97-01, 26-97-01

«20» 04 2017г. № 04-181

Հայաստանի Հանրապետության Կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Սիմոն Տեր-Սիմոնյանին

Պատճենը՝
ՀՀ Կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ
Վ. Միրումյանին

Հարգելի պրն. Տեր-Սիմոնյան

Ի պատասխան ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի՝ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին 19/04/2017թ. №06/3-8/13238-17 նամակին, տեղեկացնում ենք.

1. Հայ-Ռուսական համալսարանի կողմից իրականացվող Ծրագիրը կրում է շարունակական բնույթ և իրենից ներկայացնում է բակալավրիատի քառամյա և մագիստրատուրայի երկամյա կրթական ծրագրերի համալիր: Ծրագրի ավարտին նախատեսվում է ստեղծել Ճապոնագիտության կրթական ծրագրի համար անհրաժեշտ միջավայր՝ հագեցնելով այն համապատասխան գործիքներով, և պատրաստել ճապոնագիտության բազմակողմանի մասնագետների, ովքեր իրենց տեղը կգտնեն տարբեր ոլորտներում:
2. Ծրագրի իրականացմանն աջակցության շրջանակներում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը նախատեսվում է կատարել ծրագրի հաշվին: Միևնույն ժամանակ, Համալսարանը կներդնի սեփական մասնագետների փորձը, հմտություններն ու ռեսուրսները կրթական ծրագիրը հաջողակ դարձնելու համար:

351

ՀՀ ՄՈՒՏՔԻ...
096 - 15896
22 04 17

Այսպիսով, Ծրագրում նշված միջացառումների կատարման արդյունքում Համալսարանը ձեռք կբերի համապատասխան ռեսուրսային բազա, որը հիմք կհանդիսանա Ճապոնագիտության կրթական ծրագրի իրականացման համար:

Հարգանքով,

Ռեկտոր՝ [signature] Ա.Ռ. Դարբինյան

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ապրիլի 2017 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի -ի N 06/3-8/ -17 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի ապրիլի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի հանձնախմբի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված արևային մարտկոցների (2,261 կգ քաշով, 7,616 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,140 եվրո, ՄԾՓ մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

Բեռը անհատույց հանձնվելու է «Հիմնատավուշ» հիմնադրամին գյուղացիների կյանքի պայմանները բարելավելու համար:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին::

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Ա Ռ Ա Ջ Ի Ն   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6618-17
14.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
10.04.2017թ. N 15/15.1/8861-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու համար անհրաժեշտ է ներկայացնել բեռի բաշխման ցանկը՝ ըստ համապատասխան քանակի, քաշի, արժեքի և շահառուների (համայնքների):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

02/15124-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«12» 04 2017թ.
No 0613-8/12332-17

ն 5/3.1

Ձեր No ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 10.04.2017թ.
թիվ 15/15.1/8861-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/14800-17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705



---

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՏԱՎՈՒՇԻ**
**ՄԱՐԶՊԵՏ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

ն 5/3.1

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г, Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 4-23-56 Ֆաքս /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am ***Կայք*** *WEB* *http://tavush.mtad.am*

01/21.1/1478-17
13.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.04.2017թ. թիվ 15/15.1/8861-17/գրության հայտնում եմ, ո Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրեր համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեու ստացված բեռի ներմուծման մասին» որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Տավուշ մարզպետարանում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և արժանացել հավանության:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Հարգանքով՝

Հ. ԱԲՈՎՅԱՆ

119/15084-17

Կատ. Գ. Հարությունյան
Հեռ. 0 263 4 45 61

Հայաստան համահայկական հիմնադրամ
գործադիր վարչություն
Hayastan All-Armenian Fund
Executive Board

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Կառավարական 3-րդ մասնաշենք
Government Building 3, Yerevan 0010
Republic of Armenia
tel: (37410) 52 15 05 fax: (37410) 52 37 95
E-mail: info@himnadram.org

ՀՀՀ. 5/27-173

Ա- 5/3.1

18 ապրիլի 2017թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի լրումն մեր 06.04.2017թ. hhh. 5/27-150 թվակիր գրության, հայտնում ենք Ձեզ, որ սահմանամերձ գյուղերի զարգացման ծրագրի շրջանակներում Հիմնադրամի Ֆրանսիայի հանձնախմբի կողմից «Հայաստան» հիմնադրամի հասցեով ուղարկված արեւային մարտկոցները բաշխվելու են համաձայն կից ներկայացվող նախնական ցանկի:

Վերջնական ցանկը Ձեզ կներկայացնենք արեւային մարտկոցները բաշխելուց հետո:

Հարգանքով՝

Արա Վարդանյան
Գործադիր տնօրեն

Արմինա Դարբինյան

3.8.3

094-15600
19 04 17

Ա- 5/3.1

Տավուշի մարզ, գյուղ Լուսաձոր

- «Հիմնատավուշ» հիմնադրամի ֆերմա
- համայնքային կենտրոն
- դպրոց
- մանկապարտեզ

Տավուշի մարզ, գյուղ Խաշթառակ

- դպրոց
- մանկապարտեզ
- բուժկետ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հացեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 14.04.17, N 01.1/80-2/6618-17 | |
| Անհրաժեշտ է ներկայացնել բեռի բաշխման ցանկը՝ ըստ համապատասխան քանակի, քաշի, արժեքի և շահառուների (համայնքների) | Առաջարկությունը ընդունվել է, կցված է կազմակերպության պարզաբանումը |

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ապրիլի 2017 թվականի N Մ-    -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի –ի N եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր ազդանութեր՝ 1 տեղ, 6.5 կգ ընդհանուր քաշով, 1,835 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 165 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա-5/3.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

18.04.17թ.
№ 01.1/80-2/6737-17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.11/9283-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդյան
Հեռ. 011 910-435

18.04.17թ.
№ 034/15513-17

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա-5/3.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

18.04.17թ. N ՀԳ/22.2/4788-17

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 15/15.11/9283-17 գրության Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԵԼՍՈՆ ԶՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախչյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

18.04.17թ.
№ 020/15498-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

N 5/3.2

«19» ապրիլ 2017թ.
No 06/3-8/13806-17
Ձեր No ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.11/9283-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

19.04.17թ.
№ 044/15579-17

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2017 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

N 5/3.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի –ի N եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հոնկոնգի Հանրային առողջության լաբորատոր կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր ազդանյութեր՝ 1 տեղ, 0.1 կգ ընդհանուր քաշով, 2 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 79.10 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

մ. 5/3.3

18. 04. 17թ.
№ 01. 1/80-2/6743-17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.11/9341-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդյան
Հեռ. 011 910-435

18. 04. 17թ
№ 034/15471-17

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«19» ապրիլ 201 թ.
No 06/3-8/13228-17
Ձեր No

մ. 5/3.3

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.11/9341-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությիունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» (N1) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

19. 04. 17
№ 044/15684-17

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

21.04.17թ. N ՆԳ/22.2/4997-17

Ձեր N ________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 15/15.11/9341-17 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հացեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» (N1) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ՉՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

21.04.17թ.
№ 020/15963-17

---

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2017 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

Ar. 5/3.4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի –ի N եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր ազդանյութեր՝ 1 տեղ, 15 կգ ընդհանուր քաշով, 1,504.80 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

N 5/3.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

18. 04. 17թ.
№ 01.1/80-2/6735-17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.11/9343-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդանյան
Հեռ. 011 910-435

18. 04. 17թ.
№ 034/15478-17

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«19» ապրիլ 2017թ.
No 06/3-8/13107-17
Ձեր No ____________

N 5/3.4

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.11/9343-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

19. 04. 17թ.
№ 044/15593-17

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

21.04.17թ. N ԱԳ/22.2/4996-17

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 15/15.11/9343-17 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ԶՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախչյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

21.04.17թ.
№ 020/15964-17

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 ապրիլի 2017 թվականի N Մ- -Ա ԱՄ 5/3,5
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 18-ի N 01.1/80-2/6707-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի 18-ի N 06/3-8/13007-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի (լաբորատոր սարքեր՝ իրենց բաղադրամասերով 2 տեղ, 18.78 կգ ընդհանուր քաշով, 4,812.28 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, (փոխադրման ծախսերը կազմել են 877.35 ԱՄՆ-ի դոլար), ցանկը կցվում է, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՍՏ») ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ,
ԵՊՀ գիտական քաղաքականության
և միջազգային համագործակցության գծով
պրոռեկտոր ________ Գ. Գ. Գևորգյան

| N: (hh) | Name (Անվանում) |
|---|---|
| 1. | Aluminum table 60cmx60cm MB6060/M (Ալյումինե սեղան (60սմx60սմ)) |
| 2. | Motorized Precision Rotation Stage (Metric) Bundled with DC Servo Motor Driver and Power Supply KPRM1E/M M - O1" (Ճշգրիտ քայլային շարժիչ) |
| 3. | Adapter Plug (Փոխանցման խրոց) |
| 4. | 12.7 mm Post Holders, Spring-Loaded Hex-Locking Thumbscrew, L=100 mm PH100/M-P5. 5 Pack (Ամրակ 12.7մմ) |
| 5. | High-Precision Rotation Mount for O1" (25.4 mm) PRM1/M (Ճշգրիտ պտտվող ամրակ) |
| 6. | Clamping Fork, 9.5 mm Counterbored Slot, M6 x 1.0 Captive Screw, CF038C/M-P5,5 Pack (Ամրակ 9.5մմ) |
| 7. | 12.7 mm Optical Post, SS, M4 Setscrew, M6 Tap, L = 100 mm, TR100/M-P5 5 Pack (Ամրակ 12.7մմx100մմ) |
| 8. | 12.7 mm Optical Post, SS, M4 Setscrew, M6 Tap, L = 300 mm 2 Pack (Ամրակ 12.7մմx300մմ) |
| 9. | 12.7 mm Optical Post, SS, M4 Setscrew, M6 Tap, L = 150 mm, TR150/M-P5 5Pack (Ամրակ 12.7մմx150մմ) |
| 10. | Right-Angle Clamp for 1/2" Posts, 3/16" Hex, RA90-P5 5 Pack (Ուղիղ անկյամբ ամրակ) |
| 11. | Rotating Clamp for 1/2" Posts, 360° Continuously Adjustable, 5 mm Hex, - 5 Pack (Պտտվող ամրակ) |
| 12. | 1/2" Linear Polarizer with N-BK7 Windows, 400-700 nm, LPVISE050-A - 2 Pack (Գծային պոլյարիզատոր) |
| 13. | 1/2" Mounted Achromatic Quarter-Wave Plate, O1" Mount, 400 - 800 nm, AQWP05M-600 (Քառորդ ալիքի թիթեղ) |
| 14. | PDA100A-EC - Si Switchable Gain Detector, 320-1100 nm, 2.4 MHz BW, 100 mm², M4 Taps (320-1100նմ տիրույթի ֆոտո դետեկտոր) |
| 15. | DET10A/M - Si Detector, 200-1100 nm, 1 ns Rise Time, 0.8 mm², M4 Taps (200-1100նմ տիրույթի ֆոտո դետեկտոր) |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
13.04.2017թ. N 15/15.4/9133-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (2)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդանյան
Հեռ. 011 910-435

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Mr. 5/3.5

«18» 04 2017թ.
No 06/3-8/13007-17
Ձեր No ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 13.04.2017թ.
թիվ 15/15.4/9133-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» (2) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

N 044/15465-17
18.04.17թ.

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Mr. 5/3.6

**ապրիլի 2017 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 07/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ավստրիայի Հայոց թեմի կողմից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հոգևոր սպասավորների և զինվորների համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի (107 տեղ, 1,850 կգ ընդհանուր քաշով, 800 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 830 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

կ. 5/3.6

Անվանացանկ

| հհ | Անվանում |
|---|---|
| 1 | Կիսավարտիք |
| 2 | Շարֆ |
| 3 | Կոշիկ |
| 4 | Կտոր |


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

կ. 5/3.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


01.1/80-2/6747-17
18.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
13.04.2017թ. N 15/15.9/9104-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բադալյան
Հեռ. 011 910-435

034/15466-17
18.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«18» 04 201 թ.

No ԿՊԵԿ 06/3-3/12824-17

Ձեր No

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 13.04.2017թ.
թիվ 15/15.9/9104-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/15342-17
18.04.17

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ապրիլի 2017 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

**«ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-3/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Գառնի» հիմնադրամի կողմից սիրիական պատերազմի հետևանքով Հայաստանում ապաստան գտած սիրիահայերի ընտանիքներին անհատույց բաշխելու նպատակով «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված օգտագործված հագուստների (6,141 կգ ընդհանուր քաշով, 92,820 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6739-17
18.04.17թ.

Ա-5/3.7

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
13.04.2017թ. N 15/15.9/9168-17գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդանյան
Հեռ. 011 910-435

034/15462-17
18.04.17

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«18» 04 2017թ.
No 06/3-8/12921-17
Ձեր No

Ա-5/3.7

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 13.04.2017թ.
թիվ 15/15.9/9168-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կից ներկայացված կազմակերպության գրության համաձայն՝ ներկրվող բեռի ցանկում առկա է նաև երեխաների օգտագործված հագուստ, ուստի դրանց ներմուծման բարեգործական որակումը համարում ենք ոչ նպատակահարմար: Այդ կապակցությամբ առաջարկում ենք որոշման նախագծի 1-ին կետում նշված ներկրվող բեռի արժեքում չներառել օգտագործված երեխաների հագուստի համար նախատեսված արժեքը:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/15361-17
18.04.17

0015, Երևան, Մ. Խորենացու 3.7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության հացեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կից ներկայացված կազմակերպության գրության համաձայն՝ ներկրվող բեռի ցանկում առկա է նաև երեխաների օգտագործված հագուստ, ուստի դրանց ներմուծման բարեգործական որակումը համարում ենք ոչ նպատակահարմար: Այդ կապակցությամբ առաջարկում ենք որոշման նախագծի 1-ին կետում նշված ներկրվող բեռի արժեքում չներառել օգտագործված երեխաների հագուստի համար նախատեսված արժեքը: | Կազմակերպության կողմից ներկայացված պարզաբանումը կցվում է: |
| | |
| | |

Սիրիահայերի
Հիմնախնդիրները
Համակարգող
Կենտրոն ՀԿ

Center For
Coordination Of The
Syrian Armenians'
Issues NGO

Ք.Երևան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
Համակարգման հանձնաժողովի նախագահ
պ-րն՝ Սիմոն Տեր-Սիմոնյան

20.04.2017 թ.
01/853

Պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ պարոն՝ Վախթանգ Միրումյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

«Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն » ՀԿ-ի հասցեով ուղարկվել է բարեգործական բեռ, որը նախատեսված է կարիքավոր Սիրիահայերի և նրանց երեխաներին բաժանելու համար:

Խնդրում ենք Ձեզ ամբողջ բեռը այդ թվում նաև մանկական հագուստը որակել որպես բարեգործական, քանի որ մեր հասարակական կազմակերպությունը գոյատևում է ՀԲԸՄ Հայաստանյան գրասենյակի կողմից հանգանակվող գումարով և ոչ մի հնարավորություն չունի այլ ծախսեր կատարելու համար:

Կանխավ շնորհակալություն:

ՀԿ նախագահ ... Ս...յան


Հասցե: Զաքարիա Քանաքեռցի 1, Ք. Երևան 0052, ՀՀ
Address: Zakarya Kanakertsi 1, Yerevan 0052, Armenia
Tel.: +11 51 22 51 ; E-mail: ccsaingo@yahoo.com

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ ապրիլի 2017 թվականի N Մ - -Ա** N 5/3.8
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-017-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված մարզագույքը (7.81 կգ ընդհանուր քաշով, 265.51 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 85.34 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգում, վերակառուցում և պահպանում» ծրագրի մասին» N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

N 01.1/80-2/6752-17
18.04.2017թ.

N 5/3.8

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.6/9249-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդյան
Հեռ. 011 910-435

034/15506-17
18.04.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«18» ապրիլի 2017թ.
No 06/3-8/13028-17

Ձեր No ______________

մ. 5/3.2

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.6/9249-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի №Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/15508-17
18.04.2017թ



***ՆԱԽԱԳԻԾ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ ապրիլի 2017 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

մ. 5/3.9

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ռոբոտի հավաքածուն (19.05 կգ ընդհանուր քաշով, 700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և ծախսերը կազմել են 150 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

№: 01.1/80-2/6753-17
18.04.2017թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.6/9248-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդյան
Հեռ. 011 910-435

034/15496-17
18.04.2017թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«18» ապրիլի 2017թ.
No 06/3-8/13029-17

Ձեր No ________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.6/9248-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի №Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/15511-17
18.04.2017թ.

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**___ ապրիլի 2017 թվականի N Մ - -Ա** կր-5/3.10
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) համակարգիչներ, հարակից սարքեր, սարքավորումներ, պարագաներ և պիտույքներ՝ 9 տեղ, 85.76 կգ ընդհանուր քաշով, 13,001.37 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 737.21 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ.

2) ցանցային բաժանարարներ՝ 2 հատ, 1.5 կգ ընդհանուր քաշով, 300.70 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 60 եվրո, «Զվարթնոց» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

կր-5/3.10

*«19» ապրիլի 2017թ.*
*No 06/3-8/13111-17*
*Ձեր No ___________*

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.6/9338 գրության՝
ուղարկված ի լրումն 05.04.2017թ.
թիվ 15/15.6/8574-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի լրամշակված տարբերակի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

044/15590-17
19.04.2017թ.

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

մ. 5/3.10

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

N 01.1/80-2/6800-17
19.04.2017թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.6/9338-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղանյան
Հեռ. 011 910-435

034/15591-17
19.04.2017թ.

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ապրիլի 2017 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

մ. 5/3.11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N ՆՁ/22.2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի ՌՈՈՒ հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը (1 տեղ, 9 կգ ընդհանուր քաշով, 522 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓԵԻՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


01.1/80-2/6749-17
18.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.1/9340-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդոյան
Հեռ. 011 910-435

034/15574-17

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am


20.04.17 N ԿԶ/22.2/4927-17

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 15/15.1/9340-17 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ԶՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

020/15770-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ԽՐ. 5/3.11

«18» 04 2017թ.
No 06/3-8/13027-17
Ձեր No ________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.1/9340-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի №Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/15497-17



**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ապրիլի 2017 թվականի N Մ - - Ա**

ԽՐ. 5/3.12

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N ՆՁ/22.2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամ - Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի պրոֆեսոր Մարկուս Վեյսի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները (կաթետրներ, անեստեզիայի դիմակներ՝ 1 տեղ, 3.760 կգ ընդհանուր քաշով, 200 եվրո, արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 65 շվեյցարական ֆրանկ, ՄՓԵԻՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

Մյաս 5/3.12

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01/80-2/6990-17
21.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
19.04.2017թ. N 15/15.1/9600-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 1 («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդյան
Հեռ. 011 910-435

034/1595-17

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Մ.5/3.12

«21» 04 2017թ.
No 0613-8/13585-17
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 19.04.2017թ.
թիվ 15/15.1/9600-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի №Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

014/1596-17

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ապրիլի 2017 թվականի N Մ - -Ա

քաղ. Երևան

Ար-5/3.13

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունիսի -ի N 07/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի -ի N06/3-4/-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից՝ Արցախ հայաստան հիմնադրամից, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բժշկական պարագաներ (7 տեղ, 60 կգ ընդհանուր քաշով, 2,580, ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 944 ԱՄՆ-ի դոլար , Ջվարթնոց Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ար-5/3.13

«19» 04 2017թ.

No 06/3-3/13227-17

Ձեր No ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 18.04.2017թ.
թիվ 15/15.2/9393-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի №Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

014/15685-18

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

21.04.17թ.
01.1/80-2/6991-17

Mr. 5/3.13

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
18.04.2017թ. N 15/15.2/9393-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղանյան
Հեռ. 011 910-435

034/15948-17

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ապրիլի 2017 թվականի N Մ - - Ա**

Mr. 5/3.14

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 07/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԵՏՄ, Եվրոպական և այլ երկրների արտադրության սարքավորումների ու այլ անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների (երաժշտական գործիքներ և մասեր, լուսավորման և անվտանգության տեխնիկայի սարքավորումներ և ապրանքներ, սպասքի, տնտեսական և գրասենյակային պարագաներ, տրանսպորտային միջոցներ, գովազդային նյութեր, հուշանվերներ, մշակութային արժեքներ և այլ նյութեր) մշտական և ժամանակավոր ներմուծման հետ կապված ծախսեր, 8 տարի, յութաքանչյուր տարի – 40,000 հազ.դրամ»:

2. Սահմանել, որ Գերմանիայի քաղաքացի՝ գեղակարիչ Յուտա Մարտինա Բոշի (անձնագիր՝ CF2J9R86K, ծնված 1960 թվականի հոկտեմբերի 12-ին) կողմից «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամին նվիրատրված նկարները (220 կգ քաշով, 26,000 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,362.09 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


01.1/80-2/6869-17
20.04.17

ա. 5/3.14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.1/9246-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 05.04.17թ. N15/15.1/8529-17 գրության և հաշվի առնելով Ձեր 14.04.2017թ. N15/15.1/9246-17 գրությամբ ներկայացված Հայաստանի զարգացման նախաձեռնություններ հիմնադրամի 12.04.2017թ. գրությամբ ներկայացված պարզաբանումը հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 19.02.2016թ. «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 15-րդ ենթակետով նշված միջոցառումների համար համապատասխան գումար նախատեսված չէ, սակայն որոշման նախագծով առաջարկվում է շուրջ 27,362.09 եվրո արժողությամբ նկարների ներմուծումը դիտարկել որպես վերը նշված որոշման շրջանակներում բեռի ներմուծման հարակից գործարք:

Հետևաբար, ընդհանուր առմամբ առարկություններ չունենալով ներկայացված նախագծով ներմուծման գործարքի բարեգործական որակելու առաջարկին՝ սույնով

034/15757-17

հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրում կատարել փոփոխություն, նախատեսելով դրույթ նկարների ներմուծման միջոցառումների համար՝ համապատասխան բյուջեներով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ա. 5/3.14

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղանյան
Հեռ. 011 910-435

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«7» 04 2017թ.
No 06/3-8/11565-17

Ձեր No ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 05.04.2017թ.
թիվ 15/15.1/8529-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/14225-17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705



ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն -20.04.17, N 01.1/80-2/6869-17 | |
| Ընդհանուր առմամբ առարկություններ չունենալով ներկայացված նախագծով ներմուծման գործարքի բարեգործական որակելու առաջարկին՝ սույնով հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրում կատարել փոփոխություն, նախատեսելով դրույթ՝ նկարների ներմուծման միջոցառումների համար՝ համապատասխան բյուջեներով | Դիտողությունը հաշվի է առնվել: Կցված է նախագծի լրամշակված տարբերակը: |

Initiatives for Development of Armenia
Յայաստանի Զարգացման Նախաձեռնություններ

Ժր. 5/3.14

20 ապրիլի 2017թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին**

Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության 20.04.2017թ.-ի թիվ 01.1/80-2/6869-17 գրությունը՝ խնդրում ենք հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 19.02.2016թ.-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհման ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ստորև ներկայացված փոփոխությունը, այն է՝ հաստատել Ծրագրի 10-րդ կետի 16-րդ ենթակետի նոր խմբագրությունը.

«ԵՏՄ, եվրոպական և այլ երկրների արտադրության սարքավորումների և այլ անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների (երաժշտական գործիքներ և մասեր, լուսավորման և անվտանգության տեխնիկայի սարքավորումներ և ապրանքներ, սպասքի, տնտեսական և գրասենյակային պարագաներ, տրանսպորտային միջոցներ, գովազդային նյութեր, հուշանվերներ, մշակութային արժեքներ և այլ նյութեր) մշտական և ժամանակավոր ներմուծման հետ կապված ծախսեր, 8 տարի, յուրաքանչյուր տարի 40,000 հազ. ՀՀ դրամ:»:

Օ94 - 15891
20 04 17

Էդգար Մանուկյան
Հիմնադրամի տնօրեն

346

2/2 Melik-Adamyan st.,
Yerevan 0010, Armenia

T: + 374(60) 700 800 (Yerevan)
+ 7 499 918 7339 (Moscow)
+ 44 20 3355 4102 (London)

F: +374(10) 583 349
E: info@idea.am
W: www.idea.am

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ ապրիլի 2017 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

Ժր. 5/4.1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կոմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Սերբիայի Հանրապետության քաղաքացի Պոստիկ Միլետայի հետ (անձնագիր՝ 007553653) 2017 թվականի մարտի 14-ին կնքված՝ N 01-14.03.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Ճապոնիայի քաղաքացի Յոշո Մաչիդայի հետ (անձնագիր՝ TK4940707) 2017 թվականի մարտի 29-ին կնքված՝ N 01-29.03.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) ԱՄՆ-ի քաղաքացի Թանիա Սահակյանի հետ (անձնագիր՝ AA0002265) 2017 թվականի մարտի 31-ին կնքված՝ N 01-31.03.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջնորդական ծառայությունների մատուցում՝ 24,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) ԱՄՆ-ի քաղաքացի Անի Յափուճյանի հետ (անձնագիր՝ 550989183) 2017 թվականի ապրիլի 5-ին կնքված՝ N 01-05.04.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում

է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

5) ԱՄՆ-ի քաղաքացի Քնար Քիթաբջյանի հետ (անձնագիր՝ 492087599) 2017 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N 01-06.04.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

6) ԱՄՆ-ի քաղաքացի Պարույր Փանոսյանի հետ (անձնագիր՝ 454399184) 2017 թվականի ապրիլի 7-ին կնքված՝ N 01-07.04.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

7) «Մի & ԳԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02237048) 2017 թվականի մարտի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փայտաթելային սալերի ձեռքբերում՝ 126,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

N 01.1/80-2/6873-17
20.04.2017թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.6/9250-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

034/15753-17
20.04.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ. 5/4.1

«18» ապրիլի 2017թ.
No 06/3-8/12914-17
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.6/9250-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի №Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (N1) («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/15340-17
18.04.2017թ



**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2017 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

Հ. 5/4.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-026-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետու-թյան կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի մասին» N Մ-026-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 018087891) 2017 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի մատակարարում՝ 540,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6741-18
18.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
12.04.2017թ. N 15/15.9/9035-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-026-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/15781-17
18.04.17

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«18» 04 2017թ.
No 06/3-8/12923-17
Ձեր No

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 12.04.2017թ.
թիվ 15/15.9/9035-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի ՆՄ-026-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/15358-17
18.04.17

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**դեկտեմբերի 2016 թվականի N Մ- - Ա** N 5/4.3

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի ~~Հանրապետության կառավարության~~ բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 018087891) 2017 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի մատակարարում՝ 360,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6745-17
18.04.17

N 5/4.3

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
12.04.2017թ. N 15/15.9/9056-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/15468-17
18.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ար. 5/4.3

«18» 04 2017թ.

No 06/3-8/12922-17

Ձեր No

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 12.04.2017թ.
թիվ 15/15.9/9056-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի ՆՄ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/15364-17
13-04.17

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ու Մ

ապրիլի 2017 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

Ար. 5/4.4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքները անմիջականորեն կապված են ~~Հայաստանի Հանրապետության~~ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա (2017 թվականի հունվարի 27-ի Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սի Էյջ Էս Վերիսել Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01825631) 2017 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N ԱՍ-501 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային ջրատաքացման համակարգի նախագծում և տեղակայման աշխատանքների իրականացում՝ 9,745,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03012933) 2017 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցեմենտի մատակարարում՝ 3,533,360 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Մ-5/4.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6870-17
20.04.17թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.9/9344-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքնի մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/15754-17
20.04.17

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«19» 04 2017թ.
No 06/3-8/13110-17
Ձեր No ______

Մ-5/4.4

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.9/9344-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» («Հիմնատավուշ» զարգացման հիմադրամ) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/15597-17

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2017 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00258778) 2017 թվականի մարտի 1-ին կնքված N 1498-100417-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 1-ից մինչև 2018 թվականի մարտի 1-ը «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակաբաշխության իրականացման համար կառավարման խորհրդատվության (ծրագրերի ֆինանսական և իրավաբանական մոդելների կառուցում, ճիշտ ղեկավարման կազմի ընտրման հետ կապված խորհրդատվություն, ինչպես նաև ծրագրերի արդյունավետ կառավարման վերաբերյալ խորհրդատվություն) տրամադրում՝ 60,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6450-17
18.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.1/9245-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910 437

03/15516-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

դր. 5/4.5

«19» 04 2017թ.
No 06/3-8/13271-17
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.1/9245-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք.

1. Ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ «Պրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող ծառայությունների վերաբերյալ:

2. Որոշման նախագծի 1-ին կետում «2017 թվականի մարտի 1-ից» բառերը փոխարինել «2017 թվականի ապրիլի 1-ից» բառերով՝ հաշվի առնելով, որ 01.03.2017թ. «Պրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված գործարքի որոշակի փուլ արդեն իսկ ավարտված է և այդ մասով հարկային արտոնություն չի կարող տրամադրվել:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ Ն.Բեժանյան
Հեռ. 060544705



044/15706-17

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե –19.04.17, N 06/3-8/13271-17 | |
| Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք.<br>1. Ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ «Պրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող ծառայությունների վերաբերյալ:<br>2. Որոշման նախագծի 1-ին կետում «2017 թվականի մարտի 1-ից» բառերը փոխարինել «2017 թվականի ապրիլի 1-ից» բառերով՝ հաշվի առնելով, որ 01.03.2017թ. «Պրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված գործարքի որոշակի փուլ արդեն իսկ ավարտված է և այդ մասով հարկային արտոնություն չի կարող տրամադրվել: | 1. Դիտողությունը հաշվի է առնվել:<br>Կցված է նախագծի լրամշակված տարբերակը և կազմակերպության պարզաբանումը:<br>2. Կցված է կազմակերպության պարզաբանումը: |

դր. 5/4.5

Initiatives for Development of Armenia
Յայաստանի Զարգացման Նախաձեռնություններ

20 ապրիլի 2017թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ. N 15/15.1/9245-17 գրության, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության նախարարի տեղակալ Վ. Միրումյանի գրության կցում ենք պայմանագիրը՝ նոր խմբագրությամբ, որը պատրաստվում էինք ներկայացնել ի լրումն մեր կողմից ներկայացված դիմումի: Հաշվի առնելով պայմանագրի կողմերի փաստացի կարիքները՝ նոր խմբագրությամբ կողմերը որոշել են փոփոխել ամսական վճարման կարգը՝ փոխարինելով այն ըստ կատարված աշխատանքի՝ հանձնման-ընդունման ակտերի հիման վրա վճարման կարգի:

Հայտնում ենք նաև, որ «Փրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող կառավարման խորհրդատվության տրամադրման ծառայությունները ներառում են՝ «Ավրորա» մարդասիրական մրցանակի շրջանակներում ծրագրերի ֆինանսական և իրավաբանական մոդելների կառուցում, ճիշտ ղեկավարման կազմի ընտրման հետ կապված խորհրդատվություն, ինչպես նաև ծրագրերի արդյունավետ կառավարման վերաբերյալ խորհրդատվություն:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ խնդրում ենք բավարարել ներկայացված դիմումը:

Էդգար Մանուկյան
Հիմնադրամի տնօրեն

2/2 Melik-Adamyan st.,
Yerevan 0010, Armenia

T: + 374(60) 700 800 (Yerevan)
+ 7 499 918 7339 (Moscow)
+ 44 20 3355 4102 (London)

F: +374(10) 583 349
E: info@idea.am
W: www.idea.am

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ապրիլի 2017 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սակի ընդ Սանս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02573566) 2017 թվականի ապրիլի 13-ին կնքված N 1431-230217 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նվիրատուի կողմից արտադրվող գինու նվիրատվություն «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհման արարողությունների համար՝ 3,608,880 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6890-17
20.04.17

ձր-5/4.6

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.1/9339-17գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/15774-17

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ձր-5/4.6

«18» 04 2017թ.
No 06/3-8/13006-17
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.1/9339-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N1 («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

0604/15464-17

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ապրիլի 2017 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00258778) 2017 թվականի մարտի 1-ին կնքված N 1499-100417 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 1-ից մինչև 2018 թվականի մարտի 1-ը կառավարման խորհրդատվության տրամադրում՝ 2,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6760-17
19.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.1/9247-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/15595-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«18» 04 2017թ.
No 06/3-8/13026-17

Ձեր No ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.6/9247-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի №Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/15507-17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705



**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2017 թվականի N Մ- - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1339-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի թվականի ապրիլի -ի N 06/3-4/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1339-Ա որոշմամբ (2016 թվականի դեկտեմբերի 2-ի N Մ-1153-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02591995) 2017 թվականի ապրիլի 10-ին կնքված N 08Ա պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ապրիլի 10-ից հունիսի 30-ը աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 3,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


01.1/80-2/6738-17
18.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.1/9342-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1339-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

034/15472-17

Կատարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ


«19» 04 2017թ.
No 0613-8/13108-17
Ձեր No

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.1/9342-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1339-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/15594-17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

ապրիլի 2017 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

Ար. 5/4.9

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1354-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի ապրիլի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» N Մ-1354-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2017 թվականի մարտի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գյումրու վերելակային տնտեսություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2017 թվականի ապրիլի 12-ին կնքված N 01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 3 հենասյուների և լուսատուների մոնտաժման աշխատանքներ՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010 [illegible] Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ՝ (+374 11) 800 033, Ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/6736-17
18.04.17

Ար. 5/4.9

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.04.2017թ. N 15/15.1/9244-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4 ի N Մ-1354-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 1.2) կետում նշված «ապրիլի 17-ին» բառերը փոխարինել «ապրիլի 12-ին» բառերով

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/15474-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

մր. 5/4.9

«18» 04 2017թ.
No 0613-8/13025-17
Ձեր No ______

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.04.2017թ.
թիվ 15/15.1/9244-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի №Մ-1354-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

0014/15584-17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

մր. 5/4.9

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N Մ-1354-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 18.04.17, N 01.1/80-2/6736-17 | |
| Ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 1.2) կետում նշված «ապրիլի 17-ին» բառերը փոխարինել «ապրիլի 12-ին» բառերով | Առաջարկությունը հաշվի է առնվել: Կցված է նախագծի լրամշակված տարբերակը |

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ապրիլի 2017 թվականի N Մ-   - Ա**
**քաղ. Երևան**

Mr-5/4.10

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-241-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, Արմավիրի մարզ, քաղ. Արմավիր, Հ. Ավետիսյան 39ա, ՀՎՀՀ՝ 04417204) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաներին» ծրագրի մասին» N Մ-241-Ա որոշմամբ (2017 թվականի մարտի 10-ի N Մ-185-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2017 թվականի մարտի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգերի համար ապրանքների մատակարարում և անհրաժեշտ աշխատանքների իրականացում՝ 958,860 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2017 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետալոպլաստե և ալյումինե կոնստրուկցիաների պատրաստում, տեղադրում, ինչպես նաև ալիկաբոնդով երեսպատման աշխատանքների իրականացում՝ 2,067,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

Mr-5/4.10

01.1/80-2/6744-17
18.04.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
13.04.2017թ. N 15/15.1/9143-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-241-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/15469-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

մ. 5/4.10

«19» 04 2017թ.
No 06/3-8/13109-17

Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 13.04.2017թ.
թիվ 15/15.1/9143-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-241-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

01Կ/15598-17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍԿԲ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

**Ն Ա Խ Ա Գ Ի Ծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**--- ապրիլի 2017 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

մ. 5/4.11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-739-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի մարտի 29-ի և ապրիլի 7-ի NN 5/06.2/50644-17, 5/06.2/50701 գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 11-ի N 01.1/80-2/6400-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի 11-ի N 06/3-8/12226-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016-2017 թվականների ծրագրի մասին» N Մ-739-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2017 թվականի փետրվարի 22-ին կնքված՝ N «ԹՈՒԿ-ԾՁԲ-17/01 պայմանագրի N 1 հավելվածում նախատեսված սեմինարի կազմակերպման աշխատանքների իրականացում՝ 360,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Ալ Պառկո Հյուրանոց» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02633149) 2017 թվականի ապրիլի 4-ին կնքված՝ N «ԹՈՒԿ-ԾՁԲ-17/02 պայմանագրի N 1 հավելվածում նախատեսված սեմինարի կազմակերպման աշխատանքների իրականացում՝ 455,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

մր 5/4.11

N 01.1/80-2/6400-17
11.04.17թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
07.04.2017թ. N 15/15.4/8801-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի N Մ-739-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

N 034/14594-17
11.04.17թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«11» 04 2017թ.
No 06/3-8/12226-17

Ձեր No ________

մր 5/4.11

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 07.04.2017թ.
թիվ 15/15.4/8801-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի №Մ-739-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

Առաջարկում ենք ներկայացնել պարզաբանումներ որոշման նախագծի 1-ին կետում նշված «Անի Պլազա Հոթել» ՍՊԸ-ի հետ 22.02.2017թ. կնքված գործարքը ներկայումս հաստատման ներկայացնելու պատճառների վերաբերյալ:

Միաժամանակ, հայտնում ենք, որ եթե վերոնշյալ գործարքով նախատեսված ծառայություններն արդեն իսկ ստացվել են, ապա հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎՀՀ, Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

N 044/14678-17
11.04.17թ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016-2017 թվականների ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում են ներկայացնել պարզաբանումներ որոշման նախագծի 1-ին կետում նշված «Անի Պլազա Հոթել» ՍՊԸ-ի հետ 22.02.2017թ. կնքված գործարքը ներկայումս հաստատման ներկայացնելու պատճառների վերաբերյալ: Միաժամանակ, հայտնում են, որ եթե վերոնշյալ գործար-քով նախատեսված ծառայություններն արդեն իսկ ստացվել են, ապա հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել: | Կազմակերպության կողմից ներկայացվել է պարզաբանում (կցվում է): |
| | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
**HEAD OF STAFF**
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА**

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg., Republic Sq. Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☏ (374 11) 818 520
(374 11) 818 506

№ 5/06.2/50769-17
«19» «04» 2017թ.

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
պարոն Վ.Միրումյանին
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի գործընկերներ

Ի պատասխան ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի 11-ի N 06/3-8/12226-17 գրության՝ հայտնում եմ, որ գնման առարկան ներառված է 2016 թվականի օգոստոսի 5-ի N Ս-739-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետով հաստատված ծրագրի 9-րդ կետի 7-րդ ենթակետի 3-րդ կետում, որով հաստատված է նաև վերջինիս իրականացման ժամանակացույցը և որոշմամբ ու ծրագրով այլ ժամկետային սահմանափակումներ նախատեսված չեն: ՀՀ բնապահպանության նախարարության, «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Անի Պլազա Հոթել» ՍՊԸ-ի (այսուհետ՝ կատարող) միջև 2017 թվականի փետրվարի 22-ին կնքված N ԹՈՒԿ-ԾՁԲ-17/01 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 կետով նախատեսված է, որ՝ դրամական միջոցների փոխանցումը կատարվելու է 30 բանկային օրվա ընթացքում: Հայտնում եմ, որ կատարողին վճարումներ դեռևս չեն իրականացվել: Հաշվի առնելով այս հանգամանքը և վերոնշյալ պայմանագրի 7.1 կետը՝ պայմանագրային պարտավորությունները կողմերի միջև դեռևս անավարտ են, ուստի խնդրում եմ գործարքը որակել որպես բարեգործական:

ժամանակավոր պաշտոնակատար Հ.Հովհաննիսյան

Մ.Մարգարյան
011 818 539
011 818 514

N043/15599-17
19.04.17թ.

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**---- ------------- 2017 թվականի N Մ- -Ա** Ա · 5/4.12

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-114-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N 01.1/80-2/ -17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի 19-ի N 06/3-8/13270-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին» ծրագրի մասին» N Մ-114-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի N Մ-626-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507136) 2017 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի գնում՝ 255,625 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«19» 04 201 թ.

No 06/3-8/13270-17 Ա · 5/4.12

Ձեր No ______________

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 19.04.2017թ.
թիվ 15/15.4/9464-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-114-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

N 044/15708-17
19.04.17

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2017 թվականի N Մ- - Ա** Կ-5/5.1
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-884-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 նոյեմբերի ապրիլի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացություն-ները և ինչպես նաև հաշվի առնելով «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամ 2017 թվականի ապրիլի 10-ի N 01-14/84 գրությունը, ո ր ո շ ու մ  է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» N Մ-884-Ա որոշմանը կից ծրագիրը (2015 թվականի հունվարի 30-ի N Մ-014-Ա որոշման խմբագրությամբ) կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ավտոմեքենաները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) «Ohara Caliber MM02» թրթուրավոր ամենագնաց մեքենա՝ 2005 թվականի արտադրության, 3,057,300 ճապոնական իենին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 607,100 դրամ, «ԱՄ ՄՁՄ» ՄՏ).

2) «Hyundai Grand Starex» մակնիշի մարդատար ավտոմեքենա՝ 2011 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ KMJWA37JBBU372225, 11,900 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 2,300 ԱՄՆ դոլար և 546,800 դրամ «ԱՄ ՄՁՄ» ՄՏ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
« Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա
(ԵրՖԻ) հիմնադրամի» տնօրեն Աշոտ Չիլինգարյանի կողմից
«07» ապրիլի, 2017թ.

«Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքիի գործունեությանը»

# ԾՐԱԳԻՐ

Կ-5/5.1

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցել՝<br>–Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի, գիտա-տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը,<br>–միջազգային գիտական համակարգի հետ ՀՀ գիտական հանրության ինտեգրման գործընթացին,<br>–մտավոր ներուժի արտահոսքի կանխման գործընթացին,<br>–ՀՀ գիտական համակարգը երիտասարդ կադրերով համալրման գործընթացին,<br>–միջազգային չափորոշիչներին համապատասխանող գիտական հետազոտությունների իրականացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի իրականացման համար նախատեսվում է օրենքով սահմանված կարգով ԱԱՀ–ից ազատել ՀՀ ներսում գնվող ապրանքները և ծառայությունները, և արտերկրից գնվող ապրանքների ներմուծման ժամանակ օգտվել մաքսային տարբեր վճարումների արտոնություններից |
| 3. | Բարեգործը | «Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցություն<br>Armenian Engineers and Scientists of America, Inc.<br>117 S. Louise St. #306<br>Glendale, CA 91205 |
| 4. | Ծրագրի կատարողը | Ծրագիրը իրականացնում է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ) » հիմնադրամը (ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փ. 2, ՀՎՀՀ՝ 01202364 ) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության, ք.Երևան, Ալիխանյան եղբայրների փողոցում գտնվող թիվ 2 մասնաշենքում, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում գտնվող «Նոր- |

| | | |
|---|---|---|
| | | Ամբերդ» և «Արագած» բարձրադիր գիտական կայաններում: Գիտության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 125.000.000 (հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տիեզերական Ճառագայթների Բաժանմունքի երիտասարդ գիտականներն ու բարձրադիր գիտական կայանների կենսագործունեությունն ապահովող անձնակազմը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ Սեպտեմբերի 1–ից, մինչև 2017թ. Սեպտեմբերի 1–ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գումարների բաշխվածությունը հետևյալն է՝<br><br>– անհատական ֆինանսական օժանդակություն և աջակցություն (պարգևատրումների տեսքով) բաժանմունքի 20(քսան) երիտասարդ գիտաշխատողներին՝ 35,000,000 դրամ (2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը), ու բարձրադիր գիտական կայանների կենսագործունեությունն ապահովող և սպասարկող 15(տասնհինգ ) հոգուց բաղկացած անձնակազմին՝ 10,000,000 դրամ (2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը) .<br><br>-Ամենամյա գիտաժողովների և բարձր էներգիայի աստղաֆիզիկայի ամառային դպրոցների անցկացում «Բարձր էներգիաների ֆիզիկա և աստղաֆիզիկայի գիտափորձեր ու մեթոդներ» (TEPA) թեմայով: Գիտաժողովների շրջանակներում նախատեսվում են կազմակերպական, տարածքի վարձակալման, տրանսպորտային, սննդի կազմակերպման ծախսեր՝ 10,000,000 դրամ , որից՝<br><br>01.09.14թ.-01.09.15թ. – 3,200,000 դրամ,<br>01.09.15թ.-01.09.16թ. – 3,300,000 դրամ,<br>01.09.16թ.-01.09.17թ. - 3,500,000 դրամ<br><br>– գիտական գործուղումներ – 9,120,000 դրամ (2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը)<br><br>–հրատարակչական ծախսեր: Բաժանորդագրություններ, գիտաժողովների նյութերի, գիտական հոդվածների, ժողովածուների և մենագրությունների հրատարակում և |

| | | |
|---|---|---|
| | | հրատարակված նյութերի առաքում՝ – 8,000,000 դրամ (2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը) դրամ,<br><br>-Գիտափորձարարական սարքերի արդիականացման ու կատարելագործման համար նոր սարքավորումների ներմուծում արտերկրից՝ սերվերներ, ցանցային սարքավորումներ, միջուկային էլեկտրոնիկական սարքեր, օսցիլոգրաֆներ, մետեորոլոգիական կայաններ, կայծակների սենսորներ, արագ գործողության ֆոտոտեխնիկա (18 մլն դր, կատարման ժամկետ՝ 2014թ. սեպտեմբերի1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը) և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության ներսում (5մլն դր, 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը):<br><br>-Գիտական կայաններում երիտասարդ գիտնականների և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների ծառայությունների ( սենյակների, աշխատատեղերի, ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի վերանորոգում) և գոյատևման ծախսերի համար ապրանքների (անհրաժեշտ նյութերի, կահույքի, սարքավորումների, սննդի, վառելիքաքսայուղային նյութերի) ձեռքերում ( 5.000.000 դրամ, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվելու Հայաստանի Հանրապետության ներսում, 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում):<br>-Թրթուրավոր ամենագնաց մեքենայի ներմուծում (15.000.000 դրամ) 2017թ. մարտ-հունիս<br><br>-Մարդատար ավտոմեքենայի ներմուծում(7.000.000 դրամ) 2017թ. ապրիլ-հունիս:<br><br>-Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր(2.880.000 դրամ) |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Գիտաժողովների շրջանակներում նախատեսվում են հատուկ սարքավորումների ( լազերային |

| | | |
|---|---|---|
| | | պրոյեկտորներ և այլն) ձեռք բերում, կազմակերպական, տրանսպորտային, սննդի կազմակերպման ծախսեր՝ 10,000,000 դրամ.<br><br>2. Հրատարակչական ծախսեր: Բաժանորդագրություններ, գիտաժողովների նյութերի, գիտական հոդվածների, ժողովածուների, մենագրությունների հրատարակում և հրատարակված նյութերի առաքում՝ – 8,000,000 դրամ.<br><br>3. Գիտափորձարարական սարքերի արդիականացման ու կատարելագործման համար նոր սարքավորումների ներմուծում արտերկրից՝ սերվերներ, ցանցային սարքավորումներ, միջուկային էլեկտրոնիկական սարքեր, օսցիլլոգրաֆներ, մետերոլոգիական կայաններ, կայծակների սենսորներ, արագ գործողության ֆոտոտեխնիկա (18 մլն դր) և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության ներսում (5մլն դր).<br><br>4. Գիտական կայաններում երիտասարդ գիտնականների և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների ծառայությունների ( սենյակների, աշխատատեղերի, ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի վերանորոգում) և գոյատևման ծախսերի համար ապրանքների (անհրաժեշտ նյութերի, կահույքի, սարքավորումների, սննդի, վառելիքա-քսայուղային նյութերի) ձեռքբերում՝ 5.000.000 դրամ:<br><br>5. Թրթուրավոր ամենագնաց մեքենայի ձեռք բերում՝ 15.000.000 դրամ , ձմեռային արշավախմբերի կազմակերպման համար:<br><br>6. Մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում՝ ամառային արշավախմբերի անձնակազմերի տեղափոխման, գիտական միջոցառումների սպասարկման և այլ կարիքների համար 7.000.000 դրամ |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ամսեկան | Ծրագրի հաշվապահի աշխատավարձ ՝ ամսական 80.000 դրամ , ընդամենը 3 տարվա համար՝ 2. 880. 000 դր |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ գիտության և կրթության նախարարության գիտության պետական կոմիտեի, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և Հայհիդրոմետ ծառայության, «Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոնի» (DESY-Համբուրգ), Կառլսռուհեյի Տեխնոլոգիական ինստիտուտի (KIT), Մաքս Պլանկի անվ. Ֆիզիկայի ինստիտուտի (MPI - Մյունխեն), ամերիկյան Ստենֆորդի համալսարանի (STANFORD UNIVERSITI ) հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունավետությունը, հիմնականում, վերահսկվելու է դոնոր կազմակերպության կողմից՝ ներկայացվող ընթացիկ հաշվետվությունների հիման վրա: Միևնույն ժամանակ սահմանված կարգով համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով : |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

ու. 5/5.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


01.1/80-2/6841-17
19.04.17թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
13.04.2017թ. N 15/15.9/9172-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-884-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և ծրագրի շրջանակներում ավտոմեքենաների ներմուծման մասին («Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերի համապատասխան ենթակետերում նշված թրթուրավոր ամենագնաց մեքենայի և մարդատար ավտոմեքենայի «ձեռք՝բերում» բառերը փոխարինել «ներմուծում» բառերով:

Միաժամանակ անհրաժեշտ է ծրագրի 9-րդ կետում ներառել նաև 11-րդ կետում նշված կազմակերպչական ծախսերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդյան
հեռ. 011 910-435

034/Ք5664-17
19.04.17թ

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ


«29» 04 2017թ.

No 06/3-8/13237-17

Ձեր No ______________

ու. 5/5.1

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 13.04.2017թ.
թիվ 15/15.9/9172-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-884-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և ծրագրի շրջանակներում ավտոմեքենաների ներմուծման մասին («Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք.

Ներկայացնել պարզաբանումներ 12.09.2014թ. NՄ-884-Ա որոշմամբ բարեգործական որակված ծրագրի ավարտին (ծրագիրը ավարտվում է 01.09.2017թ.) ամենագնաց թրթուրավոր և մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման անհրաժեշտության, ինչպես նաև ծրագրի ավարտից հետո դրանց հետագա տնօրինման և շահագործման վերաբերյալ:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ Ն.Բեժանյան
Հեռ. 060544705



044/Ք5682-17
19.04.17թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՄ

REPUBLIC OF ARMENIA
A. I. ALIKHANYAN NATIONAL SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE) FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ.(37410) 341 500, ֆաքս(37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel.(37410) 341 500, fax.(37410) 349 392

20. 04 2017թ. № 01-14/96

մ. 5/5.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
Պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Տեր-Սիմոնյան

Ներկայացնում եմ Ձեր հանձնաժողովի 12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ-884-Ա որոշմամբ բարեգործական որակված «Աջակցություն Ա.Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի փոփոխված տարբերակը, որում ի նկատի են առնված Ֆինանսների նախարարության 19.04.2017թ. 01.1/80-2/6841-17 գրությամբ կատարված խմբագրական դիտողությունները:

Միաժամանակ՝ հիմատասխան Պետ եկամուտների կոմիտեի կողմից Ձեզ ուղղված 19.04.2017թ, թիվ 06/3-8/13237-17 գրության հայտնում եմ, որ՝

„Արագած„ գիտական կայանի ձմեռային արշավախմբերի անձնակազմերի տեղափոխման կարիքների համար ձեռք բերվող նոր և հուսալի SB-MM02 մոդելի „ Ратрак OHARA„ թրթուռավոր ձյունագնաց մեքենան, ինչպես նաև „Նոր Ամբերդ„ և „Արագած„ գիտական կայաններ ուղեվորվող ամառային արշավախմբերի անձնակազմերի տեղափոխման, Տիեզերական ճառագայթների բաժանմունքի հետ համագործակցող գիտական պատվիրակությունների, կոնֆերանսների ու մյուս գիտական միջոցառումների սպասարկման, բաժանմունքի այլ կարիքների համար՝ խորհրդային հնամաշ „ՈւԱԶ„ ավտոմեքենային փոխարինելու նպատակով ներկրվող HYUNDAI GRAND STAREX տիպի մարդատար ավտոմեքենան բարերար կազմակերպության կամքով մնալու են բաժանմունքում և շահագործվելու են մինչև շարքից դուրս գալը:

Բարերարը ցանկություն է հանձնել նաև շարունակել վերը հիշատակված ծրագիրը ևս մի քանի տարով:

Փոփոխված ծրագիրը կցվում է սույն գրությանը

Տնօրենի տեղակալ    Է. Մնացականյան

350

094-15836

20 04 17

մ. 5/5.1

# ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-884-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և ծրագրի շրջանակներում ավտոմեքենաների ներմուծման մասին («Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամ)» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերի համապատասխան ենթակետերում նշված թրթուրավոր ամենագնաց մեքենայի և մարդատար ավտոմեքենայի «ձեռք բերում» .բառերը փոխարինել «ներմուծում» բառերով:<br>Միաժամանակ անհրաժեշտ է ծրագրի 9-րդ կետում ներառել նաև 11-րդ կետում նշված կազմակերպչական ծախսերը: | Դիտողությունը հաշվի է առնվել լրամշակված ծրագիրը կցված է: |
| **ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք. Ներկայացնել պարզաբանումներ 12.09.2014թ. NՄ-884-Ա որոշմամբ բարեգործական որակված ծրագրի ավարտին (ծրագիրը ավարտվում է 01.09.2017թ.) ամենագնաց թրթուրավոր և մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման անհրաժեշտության, ինչպես նաև ծրագրի ավարտից հետո դրանց հետագա տնօրինման և շահագործման վերաբերյալ: | Պարզաբանումը կցված է: |